

Ֆինանսական պլանավորման մասնագետ

«Հայաստանի
արտահանման
ապահովագրական
գործակալություն» ԱՓԲԸ

Աշխատանքային
գրաֆիկ: Լրիվ դրույք

Դիմումների
ընդունման սկիզբ: 22.02.2022թ.

Աշխատանքային
փորձ: 2 տարի

Դիմելու
վերջնաժամկետ: 28.02.2022թ.

Աշխատատեղի նկարագրություն.

- 1) Կազմում է Ընկերության եկամուտների և ծախսերի նախահաշիվները,
- 2) Օրենսդրությամբ սահմանված կարգով անմիջականորեն իրականացնում է Ընկերության հաշվապահական հաշվառման վարման աշխատանքները,
- 3) առաջնորդվում է օրենքով, հաշվապահական հաշվառման ստանդարտներով, Ընկերության Հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ, եթե ավելի բարձր իրավական ուժ ունեցող իրավական ակտերով այլ բան սահմանված չէ,
- 4) ապահովում է ներքին իրավական ակտերով սահմանված կամ գլխավոր հաշվապահի հանձնարարությամբ իրեն ամրագրված գրանցամատյանների վարման աշխատանքները,
- 5) Ընկերությունում իրականացվող գործարքներին տալիս է հաշվապահական ձևակերպումներ,
- 6) Կատարում է Ընկերության աշխատողների աշխատավարձերի, արձակուրդային վճարների, վերջնահաշվարկների սահմանված կարգով հաշվարկման և վճարման աշխատանքները, ինչպես նաև հաշվարկում և սահմանված ժամկետներում ապահովում է վերջիններիս նկատմամբ հարկային և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին իրականացվող մասհանումները,
- 7) ընդունում է գործուղման հաշվետվությունները,
- 8) իրականացնում է եկամտային հարկի, սոցիալական վճարի, դրոշմանիշային վճարի և իրավական ակտերով սահմանված այլ վճարումների (ֆինանսական համակարգի հաշտարարին կատարվող վճարների, լիցենզիայի պետական տուրքի և այլն) հաշվառման և վճարման աշխատանքները,
- 9) հսկում է հիմնական միջոցների և ապրանքանյութական արժեքների ընդունման, բաց թողման, դրանց շրջանառության ձևակերպման աշխատանքները,
- 10) վերահսկում է Ընկերության գնումների գործընթացը,

- 11) Գնման պահանջ ներկայացնող աշխատակցի կողմից լրացված և Գործադիր տնօրենի կողմից հաստատված Գնումների պահանջագրերը տրամադրում է Գնումների Համակարգողին, որպեսզի վերջինս դրանց հիման վրա կազմակերպի գնումների գործընթացը,
- 12) Էլնելով Ընկերության կարիքներից կազմում է Գնումների տարեկան պլան, նախապես հարցում կատարելով Ընկերության աշխատակիցներից հաջորդ տարվա գնումների կարիքների վերաբերյալ և հիմնվելով առկա վիճակագրության վրա,
- 13) Վիզավորում է Ընկերության տնտեսական կարիքների համար ձեռք բերված տարբեր աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման պայմանագրերը և հետագայում հետևում արդեն իսկ կնքված պայմանագրերի գծով իրականացվող աշխատանքների պատշաճ որակով կատարմանը՝ վիզավորելով համապատասխան կատարողականներ,
- 14) առկայության դեպքում վերահսկում է դրամարկղի և դրամարկղային գրքի վարման աշխատանքները,
- 15) գլխավոր հաշվապահի հետ համաձայնեցնում է Ընկերության հաշվապահական հաշվառման աշխատանքների հետ կապված հարցերը, նրան ներկայացնում Ընկերության հաշվապահության աշխատանքներում հայտնաբերված սխալների, բացթողումների վերաբերյալ առաջարկություններ,
- 16) Կատարում է Ընկերության վերադաս ղեկավարության կողմից տրված լրացուցիչ հանձնարարականներ և արտածրագրային խնդիրներ:

Տևողություն: Երկարաժամկետ՝ 3 ամիս փորձաշրջանով

Պահանջվող որակավորումներ և հմտություններ:

- Բարձրագույն կրթություն համապատասխան ոլորտում
- 2 տարվա աշխատանքային փորձ
- Վերլուծական հմտություններ
- Բանակցելու և հաղորդակցվելու գերազանց կարողություն
- Սուղ ժամանակային պայմաններում աշխատելու ունակություն
- Թիմում աշխատելու հմտություն
- Համակարգչային գիտելիքներ՝ MS Office, AS Accountant, ՀՕ հաշվապահ համակարգի իմացություն
- Լեզուների իմացություն (Հայերեն - գերազանց, Անգլերեն – լավ, Ռուսերեն – լավ)

Դիմելու համար անհրաժեշտ է ներկայացնել ինքնակենսագրական (CV) info@eia.am էլ. փոստի հասցեին, նամակի վերնագրում (Subject) նշել «Ֆինանսական պլանավորման մասնագետ»: